

**ԿԻԼԻԿՅԱՆ ԵՐԱԺԻՇՏ-ՓԻԼԻՍՈՓԱՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍՍՈՒՄ ԵՎ ԴՐԱԶԱՐԿՈՒՄ
(ԺԳ-ԺԴ ԴԴ.)**

Ասորիկ Մուշեղյան

Կիլիկյան մշակույթի խոշորագույն դեմքերի՝ Գրիգոր Բ Վկայասերի, Ս. Ներսես Շնորհալու, Գրիգոր Սկևռացու, Գրիգորիս Գ Պահլավունու, Ներսես Լամբրոնացու, Հակոբ Ա Կլայեցու, Գևորգ Սկևռացու, Կոստանդին Սրիկ Սսեցու, Գրիգոր Անավարզեցու և այլոց հետ մեկտեղ Կիլիկյան երաժշտարվեստի պատմությունը կերտել են նաև վանքերում և միաբանություններում իրենց գործունեությունը ծավալած բանիբուն մշակները:

Կիլիկյան հայկական պետության կայացումից հետո, տնտեսական և մշակութային վերելքին զուգընթաց, մեծ զարկ է տրվել գիտության, դպրության և գրչական արվեստի զարգացմանը, աննախընթաց վերելք են ապրել Սսի, Հռոմկլայի, Դրազարկի, Արքակաղինի, Սկևռայի, Ակների, Գոների և այլ դպրատներն ու գրչակենտրոնները: Վանքերին կից դպրոցներում իրենց կրթությունն են ստացել բազմաթիվ երաժիշտ-փիլիսոփաներ, որոնց շնորհիվ մեծ զարգացում է ապրել երաժշտարվեստը, ընտիր օրինակներից բազում ձեռագրեր են ընդօրինակվել, այդ թվում նաև երաժշտաձիսական մատյաններ:

Սույն է իր գործունեությունը ծավալել Գրիգոր Խուլը՝ «պատուական վարժապետն և երաժիշտն և առաջին քարտուղարն Սսոյ» (ԺԲ-ԺԳ դդ.)¹, Շարակնոցի՝ «Խլկցի» (կամ «Սսու բուն») կոչված ամենահայտնի խմբագրություններից մեկի հեղինակը, որը հատուկ նախանձախնդրություն է ցուցաբերել հոգևոր երգեցողությունն անաղարտ պահելու գործում²: Հայտնի են 1238 թ. Սսում ընդօրինակված Ավետարանի գրիչ Գրիգորիս

¹ **Հ. Լեւոնդ Վ. Մ. Ալիշան**, Սիսուան, համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 105, 224, և 517:

² **Ն. Թահմիզյան**, Խազագրության արվեստն իր պատմական զարգացման մեջ, «Բանբեր Մատենադարանի», 1977, N 12, էջ 90-91: **Մ. Նավոյան**, Գրիգոր Խուլ, «Քրիստոնյա Հայաստան», հանրագիտարան, Երևան, 2002, էջ 235-236: **Խ. Ա. Հարությունյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Երևան, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, 2019, էջ 163-165:

Սսցին՝ *անայիրան գրիչն ու թարմափար երգեցողը* (1238 թ.)¹, Հովասափ երաժիշտը (1340 թ.), որը եղել է նաև հմուտ գրիչ և ծաղկող² և այլք:

ԺԳ դարից սկսած, ինչպես նկատում է Ղ. Ալիշանը, հայոց շինասեր և ուսումնասեր թագավորները մեծապես սատարում էին Սսում դպրության զարգացմանը³: Մեծ վերելք էր ապրում գրչական արվեստը. ընդ որում ձեռագրերը ստեղծվում էին ոչ միայն ի պետս կրիկյան վանական համալիրների, այլ նաև՝ արքունական առատաձեռնությամբ գրված բազում պիտանի մատյաններ առաքվում էին Սսի սահմաններից դուրս՝ Արևելքի կամ Արևմուտքի հայկական վանքերը⁴: Ի թիվս այլ ձեռագրերի, գրիչները մեծ փութաջանությամբ ընդօրինակում էին նաև երաժշտաձիսական մատյաններ, որոնցից շատերը պահպանվել են՝ տեղ գտնելով աշխարհի տարբեր ձեռագրական հավաքածուներում: Նշենք դրանցից մի քանիսը՝ **Մանրումունք** (1274 թ.⁵, 1280 թ.⁶, 1312 թ.⁷, 1330 թ.⁸, 1340 թ.¹, 1412 թ.²),

¹ **Գ. Վ. Սրուանձտեանց**, Թորոս Աղբար, Հայաստանի ճամփորդ, մասն առաջին, Կ. Պոլիս, տպագրութիւն Ե. Մ. Տնտեսեան, 1879, էջ 63-65: **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 230: **Գ. Զարբհանալեան**, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ-ԺԳ), Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1889, էջ 168: **Գարեգին Ա. Կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Կրիկիոյ, 1951, սյուն. 859-862 և 929-930: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1984, էջ 203-205:

² Ձեռ. N 572, Մանրումունք, 1340, տեղն անհայտ, հավանաբար՝ Սիս, թ. 20բ. տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատոր Դ, Շարակնոց-Ճաշոց-Ժամագիրք-Խորհրդատետր-Մանրումունք-Կցուրդք, յօրինեց Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան Մխիթարեան Ուխտէն, Վենետիկ, Ս. Ղազար, 1993, սյուն. 1108:

³ **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 224:

⁴ Նույն տեղում:

⁵ A catalogue of the Armenian manuscripts in the British museum by **Frederick Cornwallis Conybeare**, London, 1913, ms. 40, pp. 83-85. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 447: **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 222:

⁶ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Դ, սյուն. 1078 - ձեռ. N 1097: **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 223:

⁷ ՄՄ, N 8623:

⁸ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Դ, սյուն. 1096 - ձեռ. N 342:

Շարական (1269 թ.¹ Խլկցի օրինակից³, 1286 թ.⁴, 1290 թ.⁵, 1295 թ.⁶, ԺԳ դ.⁷, 1308 թ.⁸, 1319⁹, 1320¹⁰, 1322 թ.¹ “Կոստանդեա օրինակէն»¹¹, 1324 թ.¹

- ¹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Դ, սյուն. 1106 - ձեռ. N 572:
- ² Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն մանկունք եկեղեցոյ եւ մասնաւորաց, կազմեց Արտավազդ արքեպիսկոպոս Սիրմէեան, առաջնորդ հայոց Հալէպի, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1935, էջ 153 - ձեռ. N 73:
- ³ Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Հ. Յակոբբոս Վ. Տաշեան Մխիթ. Ոխտէն, Վիեննա, 1895, էջ 446 - ձեռ. N 145: Հիշատակարանում (թ. 272ա) ձեռագրի գրիչ և ծաղկող Կարապետ քահանան հատկապէս շեշտում է՝ «ի լաւ եւ յընդիր արինակէ, որ կոչի *Խլկցի*»: Մինչև վերջերս սա համարվել է Գրիգոր Խոսի խմբագրած Շարականոցի հնագույն ընդօրինակությունը. տե՛ս **Ն. Թահմիզյան**, Խազագրության արվեստն իր պատմական զարգացման մեջ, “Բանբեր Մատենադարանի», 1977, N 12, էջ 90, ծանոթ. 68: **Ն. արք. Պողարեան**, Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990, էջ 31: Սակայն նորերս **Խ. Հարությունյանը** (տե՛ս նշվ. աշխ., էջ 164) գտել է դրանից ավելի վաղ՝ 1255 թ. կատարված մի ընդօրինակություն (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դ., էջ 283):
- ⁴ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Դ, սյուն. 1 - ձեռ. N 353:
- ⁵ ՄՄ N 8538: Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում պատմական գիտ. թեկնածու Արփենիկ Ղազարոսյանին, որը մեր խնդրանքով բացահայտեց ձեռագրի գրության իրական թվականը: Մինչ այս հիշատակարանում առկա թվականը եղծված լինելու պատճառով ձեռագիրը գրված էր համարվում 1321 թ. (Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, Երևան, Հայկական գիտ. ակադեմիայի հրատ., 1970, սյուն. 768):
- ⁶ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Դ, սյուն. 35 - ձեռ. N 154:
- ⁷ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Դ, սյուն. 349 - ձեռ. N 29, ստացող՝ Հեթում Բ արքա:
- ⁸ ՄՄ, N 1590:
- ⁹ **F. Macler**, Catalogue des Manuscrits Arméniens et Géorgiens, Paris, Éd. Ernest Leroux, 1908, Ms. 66. գրիչ՝ Սարգիս Պիծակ:
- ¹⁰ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատոր եօթներորդ, կազմեց Ն. արք. Պողարեան, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1974, էջ 496 - ձեռ. N 2355:
- ¹¹ Հիշատակարանում վայրը չկա, ըստ կազմողի՝ Դրազարկ, Սիս. տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատոր հինգերորդ, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1971, էջ 462 - ձեռ. N 1644, գրիչ և ծաղկող՝ Սարգիս Պիծակ, որը հիշատակարանում (էջ 637) գրառել է. «Գրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ բազմամեղ եւ անարժան քահանայի Սարգսի, ի լաւ եւ յընտիր արինակէ, որ կոչի Կոստանդեա»:

Խլկցի օրինակից¹, 1325 թ.², 1335 թ.³ Խլկցի օրինակից³ **Կցորդարան** (1325-ից առաջ⁴), **Խորհրդատետր** (ԺԳ դար⁵, 1334 թ.⁶), **Ժամագիրք** (1277թ.⁷), **Ժողովածոյ ծիսական գրոց** (1279 թ., որ իր կազմում ունի՝ Ա. Շարական, Բ. Խազգիրք, Գ. Տօնացոյց (Գևորգ Սկևռացու խմբ.)⁸ և այլն: Արքայական տան պատվերով 1283 թ. Ստում ընդօրինակվել է հայ գրչության և մանրանկարչության փայլուն նմուշներից մեկը՝ Լևոն Գ թագավորի Սաղմոսարանը (գրիչ՝ Յոհան, ներառում է Սաղմոսարան և Ժամագիրք)⁹:

Կիլիկիայում մեծ հռչակ էր վայելում Դրազարկը: Այն ԺԲ դարից հայտնի էր որպես կրթական կենտրոն, որը հիմնել էին **Գևորգ վարդապետ Մեղրիկը** և **Կիրակոս Գիփնականը**. «Ժողովեցին զդասս միանձանցն ի Դրազարկն եւ եղեն սկիզբն նորոգման սուրբ ուխտին»¹⁰: **Գևորգ Մեղրիկը** նաև հայտնի երաժիշտ էր, բանաստեղծ, շարականագիր, տաղասաց, հեղինակ մի շարք աղօթքների, ինչպես նաև «Երգք Օրհնութեանց» և «Բան Խոստովանութեան» գրվածքների¹¹: Դրազարկը հայ երաժշտարվեստի խոշոր կենտրոններից մեկն էր, նաև՝ մանրուսման նշա-

¹ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատոր հինգերորդ, էջ 421 - ձեռ. N 1620, ծաղկող և ոսկող՝ Սարգիս Պիծակ:

² ՄՄ, ձեռ. N10439, գրիչ՝ Սարգիս Պիծակ:

³ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատոր հինգերորդ, էջ 359 - ձեռ. N 1578, գրիչ և ոսկող՝ Սարգիս Պիծակ:

⁴ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Դ, ս. 1125 - ձեռ. N 118, ստացող՝ Կոստանդին Գունդստարլ:

⁵ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Դ, ս. 1021 (ձեռ. N1411):

⁶ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Դ, ս. 678 - ձեռ. N 2003, գրիչ, ծաղկող և ոսկող՝ Սարգիս Պիծակ:

⁷ ՄՄ, N 4515:

⁸ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատոր հինգերորդ, էջ 559 - ձեռ. N 1692:

⁹ **Հ. Հապէշեան**, Սաղմոսարան գրուած Լեւոն Գ թագաւորի համար (ՉԼԲ 1283), «Հանդէս ամսօրեայ», 1922, փետրուար-մարտ, էջ 139-155: ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 548-550:

¹⁰ **Սմբատայ Սպարապետի** Տարեգիրք, Վենետիկ-Ս. Ղազար, 1956, էջ 158-159:

¹¹ **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա., Երևան, Պետական համալսարանի հրատ., 1942, էջ 460-461: Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, էջ 446: **Ն. Ակինեան**, Մատենագրական հետազոտութիւններ, հ. Ե, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1953, էջ 115-119:

նավոր կենտրոն¹: Այստեղ գրչագրվել են մի շարք արժեքավոր ձեռագրեր, ինչպես՝ **Ճաշոցը** (1239)², **Մանրումունքը** (1313³, 1321⁴) **Շարակնոցի** երկու ընդօրինակությունները (1318 և 1322), որոնց գրիչների՝ *Յակոբ Դպրի*⁵ և *Սարգիս Պիծակի* (նաև ծաղկող)⁶ հաղորդած տեղեկությունների համաձայն՝ դրանք կատարվել են ժամանակի հայտնի երաժշտապետ *Կոստանդի* խմբագրած օրինակից. «*Գրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ բազմամեղ եւ անարժան քահանայի Սարգսի, ի լաւ եւ յընտրի աւրինակէ, որ կոչի Կոստանդես*»: Այլ ձեռագրերի թում են՝ **Օջին թագավորի ժամագիրքը**, գրված 1319-ին (ներառում է Սաղմոս, Շարական, ժամագիրք, Մանրուսում եւ Տօնացոյց ժողովածուները)⁷, 1327-ին արտագրված **Մանրումունքը**⁸, 1328-ին ընդօրինակված «Ոսկենկար»⁹ **Շարակնոցը**¹⁰ և այլն:

Դրագարկում են գործունեություն ծավալել բազմաթիվ երաժիշտներ, որոնցից են **Վարդան** երաժշտապետը (1221¹¹), **Գրիգորիսը**, որ 1247-ին

¹ **Կոմիտաս Վարդապետ**, Հայոց եկեղեցական եղանակները, Ուսումնասիրություններ եւ Յօդուածներ, Երկու գրքով, աշխ.՝ Գ. Գասպարեան եւ Մ. Մուշեղեան, գիրք Ա., Երեւան, «Սարգիս Խաչենց» հրատ., 2005, էջ 63:

² Յուրաքանչյուր հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, ձեռ. N 53:

³ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Դ., ձեռ. N 734: **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 233:

⁴ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. ութերորդ, կազմեց Ն. արք. Պողարեան, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1977, ձեռ. N 2434, գրիչ՝ Ստեփանոս Երկայն:

⁵ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. հինգերորդ, ձեռ. N 1700, էջ 631:

⁶ Նույն տեղում, ձեռ. N 1644, էջ 637:

⁷ **Արտաազգ արքեպիսկոպոս [Սիրմէեան]**, Նկարագիր Օջին Թագաւորի ձեռագիր ժամագիրքին, 1319, Հալէպի Ս. Քառասնից եկեղեցւոյ Ձեռագիրներէն, Թիւ 6, Անթիլիաս-Լիբանան, տպարան Դպրեվանուց, 1933:

⁸ ՄՄ, ձեռ. N 10524:

⁹ Գրիչն այսպէս է անվանում մատյանն իր հիշատակարանում (թ. 368բ):


¹⁰ ՄՄ, ձեռ. N 1576: Այս մասին տե՛ս **Հ. Հ. Ոսկեան**, Կիլիկիայի վանքերը, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1957, էջ 197: **Ա. Ղազարոսեան**, Կիլիկիայի վարդապետարաններն ու գրչութեան կենտրոնները, «Հասկ Հայագիտական Տարեգիրք», Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 83: **Ա. Ղազարոսյան**, Կիլիկիայի գրչության կենտրոնների սկզբնավորումը. Սև լեռան և Դրագարկի գրչության կենտրոնը, «Էջմիածին», 2008, Ը, էջ 78-79:

¹¹ Վարդան երաժշտապետին առնչվող նյութը մեզ է տրամադրել Կարեն Մաթևոսյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը: Հիշատակարանը հայտնաբերել և

գրչագրված “Նարեկ»-ում նշվում է որպես Դրազարկի երաժշտապետ¹, **Բարսեղ** երաժիշտը (1294)², **Մանիլ** փիլիսոփան (1295)³, **Յովսէփ** փիլիսոփան (1295)⁴, **Յակոբ երէցը** և նրա եղբայր **Յովհաննէս կուսակրօն քահանան** (1313)⁵, **Սիմէոնը**⁶ Դրազարկի դպրապետ⁶, և վերջապես՝ **Թորոս Թափրոնցը**⁷ «իմաստուն եւ հանճարեղ» երաժիշտ-փիլիսոփան ու դասապետը, նաև ճարտար ու հմուտ քաղաքագետը, որին 1307 թ. որպես դեսպան առաքել էին Անգլիա: Արքունի ավագերեց Թորոս Հոռմկլայեցին քաջահմուտ էր գրչության արվեստի մեջ. նա ընդօրինակել է մի շարք ձեռագրեր, այդ թվում՝ Մասունք Նոր Կտակարանի⁸, երկու Ավետարան⁹, անմիջական մասնակցություն է ունեցել Օշին թագավորի ժամագրքի ստեղծմանը՝ գրչագրելով Շարակնոցը¹⁰:

հրատարակել է դոկտոր Աննա Շիրինյանը. **Anna Sirinian**, Da Drazark a Roma: una pagina di storia ciliciana nel colofone del manoscritto Arch, Cap, S, Pietro B 77, in “Bnagirk’ yišatakac”, Dall'Italia e dall'Armenia, Studi in onore di Gabriella Uluhogian, a cura di V. Calzolari, A. Sirinian, B. L. Zekiyian, Bologna 2004, pp. 72-80.

- ¹ ՄՄ, ձեռ. N 3929, թ. 336ա: **Գարեգին Ա. Կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, սյուն. 977-978:
- ² Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 729-732 և 758-759: **Ա. Ղազարոսյան**, Կիլիկիայի գրչության կենտրոնների սկզբնավորումը, էջ 75-76: **Ա. Ղազարոսեան**, Կիլիկիայի վարդապետարաններն ու գրչութեան կենտրոնները, էջ 84:
- ³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 759:
- ⁴ Նույն տեղում, էջ 757-759:
- ⁵ **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 517:
- ⁶ Նույն տեղում: Գործունեության ժամանակաշրջանը նշված չէ:
- ⁷ Նույն տեղում, էջ 234-235, 517, 545 եւ 557: **Հ. Հ. Ոսկեան**, Կիլիկիայի վանքերը, էջ 166:
- ⁸ ՄՄ, ձեռ. N 154, 1311 թ., Գերմաղբեր (Կիլիկիա):
- ⁹ Առաջին Ավետարանի մասին տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. առաջին, յորինեց Հ. Բ. Վ. Սարգիսեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1914, ձեռ. N 97, 1331, Դրազարկ, թ. 387ա: Երկրորդ Ավետարանը՝ նույնպես գրված 1331 թ. Դրազարկում, գտնվել է Գանձակի Ոսկանապատ գյուղի եկեղեցում, որի հիշատակարանը բերված է՝ **Մ. արք. Սմբատեանց**, Նկարագիր Սուրբ Կարապետի Վանից Երնջակայ Եւ Շրջակայից Նորա (1897-1904), Տիփսիս, տպարան Մովսէս Վարդանեանցի, 1904, էջ 151. տե՛ս նաև ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 231:
- ¹⁰ **Արտաազգ արքեպիսկոպոս [Սիրմէեան]**, Նկարագիր, էջ 820:



Մի էջ ՄՄ 3503 ձեռագրից (Միս, 1394 թ., գրիչ՝ Եսայի Սասնեցի)

Դրագարկի Ս. Աստվածածին վանքին կից բարձրագույն տիպի դպրոցում է գործունեություն ծավալել նշանավոր **Յովսէփ երաժշտապետը**, որի մասին խոսելիս Ալիշանը հաստակապես շեշտում է՝ «*Ի բազմաց երգեցողաց անտի եւ ոչ յիշեցելոց ի նմանէ, միանգամայն եւ երիցագոյն՝ է Յովսէփ երաժշտապետ վանաց Դրագարկի*»¹:

Հովսէփ երաժշտապետն ու երաժշտագետը², անշուշտ, քաջատեղյակ էր հայ երգաստեղծության ակնառու նվաճումներին: Դրագարկի Ս. Աստվածածին վանքի մատենադարանում էր պահվում նրա անմիջական մասնակցությամբ կազմված ու խմբագրված *գաղափար* Տաղարանը³, որը ներառում էր Ոսկեդարյան շրջանից մինչև ժամանակակից հեղինակների տաղային ստեղծագործության լավագույն նմուշները: Ահա մի այսպիսի Տաղարան էր որոնում **Յովհաննէս** գրիչը, որն էլ Դրագարկում 1241 թ. ընդօրինակելով՝ սերունդներին թողեց մի բացառիկ մատյան (Գանձարան-Տաղարան, պահվում է Փարիզի Ազգային գրադարան, N 79): Իսկ Հովսէփին, որն անձանձիր շնորհել էր օրինակը՝ իր հիշատակարանում նվիրեց հետևյալ տողերը. «*կարի հասու ամենայն իմաստից երաժըշտից մինչև ի բաւանդակն որ յաուրս ոչ գտանի յանգոյն*» (թ. 403ա):

Գանձարաններում պահպանվել են Հովսէփ երաժշտապետ Դրագարկցու հեղինակած մի քանի երգեր՝ «*Յամենից գոյից, բնաւից բանաւոր սեռից անմահից*» (Քարոզ Սրբոց Քառասնիցն ասացեալ Յովսէփայ)⁴, «*Յանմարմնոց զարաց, գերաբուն էից արենաբանից*» (Յովսէփայ Վարդապետի ասացեալ ի Սուրբն Գրիգոր Լուսաւորչին)⁵, «*Յառաջ քան զվկիզբն էիցս յանվախճան, Հարէ անսկզբնական, Ծընունդ էական*» (Յովհաննու Մկրտչին ի Յովսէփայ վարդապետէ ասացեալ)⁶: Երեքն էլ ունեն հեղինակի անունը հոդող ծայրակապեր՝ «*Յովսէփա երժ*»⁷, «*Յովսէփա ե-*

¹ Դ. Ալիշան, Սիսուան, էջ 517:

² Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երեւան, Պետական համալսարանի հրատ., 1946, էջ 716:

³ Ա. Ղազարոսյան, Կիլիկիայի գրչության կենտրոնների սկզբնավորումը, էջ 72: Ա. Ղազարոսեան, Կիլիկիայի վարդապետարաններն ու գրչութեան կենտրոնները, էջ 82:

⁴ ՄՄ, ձեռ. N 4068, Գանձարան, ԺԴ դ., տեղի՝ անյայտ, թ. 63բ: Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. եօթներորդ, ձեռ. N 2015, 1387 թ., Երզնկա, էջ 109:

⁵ ՄՄ, ձեռ. N 4068, թ. 120ա:

⁶ Նույն տեղում, թ. 284բ:

⁷ Ամենայն հավանականությամբ՝ «երաժշտապետ» կամ «երաժիշտ» բառի համառոտումն է: Այս նկատառմանը հանդիպում ենք նաև Ն. Պողարեանի մեկնություններում.

րգ», «Յովսէփն»:

Հնագույն Տաղարանի խորագրերում հիշատակվող հեղինակներից է **Բարսեղը** («Այլ Տաղ Խ-իցն, Բարսղի Ասաց[եալ]», թ. 345բ), որ հեղինակել է «Երգ Ներբողական Քաղցրայնուագ Հընչմամբ» տաղը եւ «Քրիստոս Փառաց Թագաւոր Փառաւորեալդ Ի Չուարթնոց» փոխը (թ. 346ա): Դրանք միասին կազմում են «Երգ Բարսղի Երգ Քառասունսն» ծայրակապը: Ձեռագրական այլ աղբյուրներից հայտնի է նաև այս հեղինակի հորինած Ս. Ծննդյան քարոզը՝ «Բարեբանեալ Բոլորից Աստուած, Անմահ Թագաւոր» (ծայրակապ՝ «Բարսղի»)¹: Մեր կարծիքով Բարսեղ անունով տաղերգուն, ամենայն հավանականութեամբ, Դրազարկի առաջնորդ Բարսեղ (Բասիլիոս) արքեպիսկոպոսն է² (1241-1275), որը նաև նշանավոր երաժիշտ-փիլիսոփա էր: Նրան հիշում է Տաղարանի գրիչ Հովհաննեսն իր հիշատակարանում. «Եւ եւ առաջնորդ ուխտիս. մեծն Բասիլիոս եղբայր թագաւորին Հեթմոյ» (թ. 402ա): Բարսեղ Ռաբունու սաներից էր նրա կրտսեր եղբայրը՝ Հովհաննես եպիսկոպոսը (Արքաեղբայր)³, որն անչափ մեծարել է իր ուսուցչին՝ «*զաստուածապատիւ արքեպիսկոպոս արքայեղբայրն Հայոց, զպէրն ոգւոյ եւ զերախտաւորն մարմնոյ իմոյ զԲասիլիոս, որոյ երախտիք գերազանց է քան զքան եւ ըզմիտս՝ ի կրսերս իւր*»⁴ (1263 թ.): Հովհաննես Արքաեղբայրն ինքն էլ եղել է հայտնի երաժիշտ-տաղերգու և զգալի երաժշտաբանաստեղծական ժառանգություն թողել⁵:

«Այս մեծաշունչ Քարոզին հեղինակը կը թուի ըլլալ Յովսէփ երաժշտապետ, որ անուն շահած էր ԺԳ. դարու առաջին կիսուն: Քարոզին վերջին տան սկզբնատառը ըստ սովորութեան գ (երգ) գրուելու փոխարէն դրուած է ժ (երժ), կարծես թելադրելու համար երաժիշտ կամ երաժշտապետ բառը» (Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. եօթներորդ, էջ 37):

¹ ՄՄ, ձեռ. N 4068, թ. 6բ:

² Նրա մասին տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 233: **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 397:

³ **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 144: **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Բ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, սյուն. 1935:

⁴ **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 144: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դ., էջ 323:

⁵ Նրա երկերից մի քանիսը տեղ են գտել, մասնավորապես, Վենետիկի հավաքածոյի N 2070, ՄՄ N 3503 և այլ ձեռագրերում:

Դրագարկում օրինակված Գանձարան-Տաղարանից հետո մեր ձեռագրական ժառանգության մեջ պահպանված հաջորդ Տաղարանը Ստում 1348 թ. ընդօրինակվածն է՝ **Յեսու Արևելի** փիլիսոփայի ձեռքով՝ նույնպես չափազանց արժեքավոր մի ձեռագիր, որից կատարված է երկու կրկօրինակություն, երկուսն էլ՝ Եսայի Սասնեցու ձեռքով (առաջինը՝ 1394 թ., ՄՄ N 3503 և երկրորդը՝ 1395, տեղն անհայտ): Հեսու փիլիսոփան ևս կիլիկյան երաժշտարվեստի նշանավոր դեմքերից մեկն է, որի կատարած աշխատանքը դժվար է գերազնահատել:

ԺԳ-ԺԴ դարերում ընդօրինակված այս Տաղարանները պատկերացում են տալիս մեր վանական դպրոցների գիտակրթական փայլուն մակարդակի, երաժիշտ-փիլիսոփաների բարձր պրոֆեսիոնալիզմի, երաժշտական արվեստի, խազագրության ու ձայնեղանակների տեսության մեջ քաջահմուտ լինելու մասին: Դրանք ի հայտ են բերում նաև կիլիկյան նոր տաղերգուների, որ ժամանակի առաջադեմ ստեղծագործողների շարքին են դասվում, ինչպես Անդրիաս վարդապետը, Կոստանդինը, Գորգը և ուրիշներ: Այս հեղինակների ինքնության բացահայտումն ու նրանց տաղերի ուսումնասիրությունը նոր լույս կսփռի ոչ միայն կիլիկյան, այլև հայ տաղերգության պատմության վրա ընդհանրապես:

ДЕЯТЕЛЬНОСТЬ КИЛИКИЙСКИХ МУЗЫКАНТОВ–ФИЛОСОФОВ В СИСЕ И ДРАЗАРКЕ (XIII-XIV ВВ.)

Астхик Мушегян

Ключевые слова: *Киликия, Сис, Дразарк, музыкант-философ, музыкальное искусство, певческие книги, Тагаран, Гандзаран, таг, таговое искусство.*

Наряду с крупнейшими деятелями киликийской культуры историю киликийского музыкального искусства создавали также музыканты-философы, работавшие в известных монастырях. В статье представлены ведущие музыканты Сиса и Дразарка, дается перечень и общая характеристика созданных ими певческих книг. Оценивается также их заслуга в развитии киликийской музыкальной культуры в целом и *тагового* искусства в частности.

**ACTIVITY OF CILICIAN MUSICIANS-PHILOSOPHERS
IN SIS AND DRAZARK (XIII-XIV CENTURIES)*****Astghik Musheghyan***

Keywords: *Cilicia, Sis, Drazark, musician-philosopher, musical culture, chanting books, Tagharan, Gandzaran, tagh, tagh art.*

Along with the greatest figures of Cilician culture, the history of Cilician musical art was also created by musician-philosophers who worked in famous monasteries. The article presents the leading musicians of Sis and Drazark, a list and general characteristics of the chanting books created by them are given. Also evaluates their merit in the development of Cilician musical culture in general and tagh art in particular.

Աստղիկ Մուշեղյան – արվեստագիտության թեկնածու, «Մատենադարան»- Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի ավագ գիտաշխատող

a.musheghyan@gmail.com

Астхик Мушегян - кандидат искусствоведения, старший сотрудник Матенадарана-института древних рукописей имени Месропа Маштоца

Astghik Musheghyan - PhD in Art, Senior resaercher of Matenadaran - Institute of Ancient Manuscripts after Mesrop Mashtots